



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 185 20 հոկտեմբերի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 18, թիվ 19-Ա
և թիվ 20-Ա որոշումները:
Առդիր 4 էջ:

Համայնքի ղեկավար

Հ. Ռոստոմյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ

գ.Քարաձոր փողոց 1 շենք13

15 հոկտեմբերի 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ թիվ 18

«15» հոկտեմբերի 2021 թվական

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով՝

1.Քարաձոր համայնքի սեփականության ամենամյա գույքագրման նպատակով կազմել
հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Հրանուշ Ռոստոմյան - հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար
2. Հայաստան Սահակյան – հանձնաժողովի անդամ, աշխատակազմի առաջատար մասնագետ
3. Իշխան Պետրոսյան - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ / իր համաձայնությամբ/
4. Վահրամ Կարապետյան - հանձնաժողովի անդամ, ավագանու անդամ /իր համաձայնությամբ/
5. Զարգանդ Բարսեղյան - հանձնաժողովի անդամ /իր համաձայնությամբ/

2.Հանձնաժողովին գույքագրումն անցկացնել սույն թվականի նոյեմբերի 10-ից -12-ը
ընկած ժամանակահատվածում և գույքագրման փաստաթղթերը ներկայացնել ավագանու
հաստատմանը:

Համայնքի ղեկավար՝

Հ. Ռոստոմյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,

գ. Քարաձոր, փողոց 1, շենք 13 հեռ. 098-56-16-00

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2021 թվականի N19-Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎԱՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝

Որոշում եմ.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների անցկացման համար Լոռու մարզի Քարաձոր համայնքի տարածքում տեղամասային կենտրոն սահմանել՝ դպրոցի շենքը (հասցեն՝ գ. Քարաձոր 1-ին փողոց 11 շենք):
2. Սույն որոշման մասին տեղեկացնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տարածքային ստորաբաժանմանը, թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովին և տարածքը տիրապետողին:

Համայնքի ղեկավար՝

Հ. Ռոստոմյան

2021 թվականի հոկտեմբերի 18 գ. Քարաձոր



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՔԱՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ,

գ. Քարածոր, փողոց 1, շենք 13 հեռ. 098-56-16-00

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբերի 2021 թվականի N 20 -Ա

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի
ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎԱՆ ԱՆՑԿԱՑԿՈՂ ՀԵՐԹԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ
ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆԿՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասին, և
«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ
հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝

Որոշում եմ.

Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ի
կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական անցկացման
ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին
նախընտրական քարոզչություն իրականացնելու համար քարոզչական պաստառներ,
քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում
առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

- 1) Մատինյան Արթուրիկի տան ճակատային մաս՝ 1-ին փողոց տուն 26, 5 քառ.մետր (սեփականատիրոջ համաձայնությամբ):
- 2) Բաղդասարյան Ջաքարի տան ճակատային մաս՝ 1-ին փողոց տուն 29, 5 քառ.մետր(սեփականատիրոջ համաձայնությամբ):

Համայնքի ղեկավար՝



Հ. Ռոստոմյան

2021թ. հոկտեմբերի 18 գ. Քարածոր